

ՓԱՆԶԻՆՔ

ԱՐԾԱԹԱՍԻՐՈՒԹԵՆԷ

Լսեցէք այս խօսքերը դուք, որ ձեր հոգիին աղտոտ գործեր հազցուցած Քրիստոսի մարմինն ու արիւնը կ'ուտէք եւ կը խմէք: Անչցէք հրաւիրողէն: Եթէ կ'ուզէք Աստուծոյ տեսութեան արժանանալ, թող ո'չ որ աղտոտ հազուստներով մնայ, այլ իրաքանչիւրը լուայ իր հոգիի պատմուճանը, որովհետեւ Աստուած այսպէս պատուիրեց, երբ կ'ուզէր Սինա լեռ իջնելով ժողովուրդին երեսիլ:

Լսեցէք այրեր եւ կիներ, ո'չ փափուկ մարմիններու պէտք ունիք եւ ո'չ ալ զարդարուն հազուստներու, այլ՝ ներքին զարդերու եւ փափկութեան: Կարելի չէ միաժամանակ եւ հոգին եւ մարմինը փափկացնել եւ զարդարել, ինչպէս որ կարելի չէ Աստուծոյ եւ ինչքերու ծառայել:

Ըսէ՛, համաձայն կը գտնուէի՞ր արդեօք, եթէ մէկը իր տունը զարդարէր եւ քեզ մերկ նստեցնէր ներսը, ահա դուն եւս հոգիիդ հետ նոյն ձեւով կը վարուիս: Մարմինդ տունի նման կը զարդարես, իսկ հոգիդ կը ձգես, որ մերկ եւ անօփ նստի ներսը: Պատշաճը այն էր, որ մարմինիդ հազուստով եւ կերակուրով չափաւոր կերպով գոհացնէիր, իսկ հոգիդ՝ թագաւորդ զարդարէիր եւ փափկացնէիր, զոր դուն սովամահ ձգած երկրաւոր չար ցանկութեանց կը հետեւիս: Հետեաբար, ասկէ ետք ո'չ միայն հաւատքով, այլեւ՝ բարի գործերով սիրենք զԱստուած:

Ճառեր 3. Մանդակունի

ՀՈԳԵՒՈՐ ԽՈՐՀՐԴԱՏՈՒ

Երկրայինով երկնայինին տիրանանք

Աստուած ինքն է աղբատացնողն ու հարստացնողը (Ա.ԹԳ 2.7): Աստուծմէ իր առածը ինքն իր անձին համար պահողը՝ ուրիշին իրաւունքն է, որ յափշտակած կ'ըլլայ: Ան որ իրեն տրուած նիւթական հարստութիւնը կ'օգտագործէ Աստուծոյ փառքին համար՝ արժանի պիտի դառնայ վայելելու երկինքի բազմապիսի գանձերը: Երկրաւոր հարստութեան բաշխումով՝ ժառանգած կ'ըլլանք երկնաւոր հարստութիւնը: Երկինքի գանձը՝ Քրիստոս, իր արքայութեան դուռը լայնօրէն պիտի բանայ մեր առջեւ, եթէ երբեք երկրի վրայ մեր ունեցած գանձերէն բաժին հանենք աղբատին: Երկինքի տէրը կը դառնանք՝ երբ երկիրը չէ մեր տէրը: Կը դառնանք զաւակ Աստուծոյ եւ ընկեր հրեշտակներու, երբ կը կարեկցինք աղբատին:

Սիրելի ընթերցող, ՃՐԱԳ թերթը ամէն Կիրակի կը բաժնուի մեր ժողովուրդին, եկեղեցիներու բանկային մօտ: Նաեւ՝ Facebook-ի վրայ փնտռել «Jerak կամ ՃՐԱԳ», ապա սեղմել «Like»ը, կարդալու կամ անդամագրուելու համար:

ՀԱՍՅԷ.

ՃՐԱԳ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ - ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ - Bourj-Hammoud, P.O.Box 80810 -Tel/Fax:01-258300- facebook-ի էջ jerak ճրագ թերթ



ՔՈՒ ԽՕՍԵՂ ԽՄ ՈՏԹԵՐՈՒՄ ԵՐԱԳ Է ՈՒ ԽՄ ՇԱԽՂՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ (Ս. 119-105)

ԺԱ. ՏԱՐԻ ԿԻՐԱԿԻ, 2 ԴԵԿՏԵՄԵՐ 2018 ԹԻԻ 48

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԱԾԱՆՉԱԿԱՆ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ Ես.36.22-37.11: Ա. Թս. 4.1-11: ՅԻՍՈՒ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ՂՈՒԿԱՍՈՒ 13.1-9

Ոմանք եկան Յիսուսի եւ պատմեցին այն գալիլիացիներուն մասին, որոնք Պիղատոսի կողմէ սպաննուեցան, երբ Աստուծոյ գոհ կը մատուցանէին: Յիսուս անոնց ըսաւ. «Կը կարծէ՞ք թէ սպաննուող գալիլիացիները միւս բոլոր գալիլիացիներէն աւելի մեղաւոր էին, որ այդպիսի վախճան մը ունեցան: Ո՛չ: Կ'ըսեմ ձեզի, որ եթէ չապաշխարէ՛ք՝ դուք բոլորդ ալ նոյնպէս պիտի մեռնիք: Կամ ի՞նչ կը մտածէ՛ք այն տասնութ մարդոց մասին, որոնց վրայ ինկաւ աշտարակը Սելվամի մէջ եւ սպաննեց զանոնք: Անոնք աւելի՞ յանցաւոր էին քան՝ Երուսաղէմի բոլոր բնակիչները: Ո՛չ: Կ'ըսեմ ձեզի, որ եթէ չապաշխարէ՛ք՝ բոլորդ ալ նոյնպէս պիտի մեռնիք»:

Անոնց հետեւեալ առակը պատմեց. «Մարդ մը կար, որ իր այգիին մէջ թօգնի մը տնկած էր: Երբ ժամանակը եղաւ, թուզ քաղելու գնաց, բայց թօգնիին վրայ պտուղ չգտաւ: Այգեպանին ըսաւ. “Այս երրորդ տարին է որ կու գամ թուզ քաղելու, բայց չեմ գտներ: Ուստի կտրէ՛ գայն, ինչն՞ աւելի՞ մաստ կերպով տեղ գրաւէ”: Այգեպանը պատասխանեց. “Տէ՛ր, թող այս տարի ալ մնայ. ես իր շուրջի հողը կրկին կը փորեմ եւ պարարտացուցիչ կը դնեմ: Այս ձեւով թերեւս պտուղ տայ. ապա թէ ոչ՝ գալ տարի կտրէ գայն”»:

Աշխարհական թէ հոգեւորական, ամէնուն պարտքն է աշխատիլ, որ մաքուր ըլլանք մեր խղճմտանքին եւ Աստուծոյ առջեւ եւ սիրով ու լայնախոհ ոգիով յարգենք մեր Ա. եկեղեցւոյ կարգ ու կանոնը, գործնականապէս աշխատինք անոր բարեկարգութեան եւ պայծառութեան, եւ ո'չ թէ գլուխ բռնելով եւ անձնական կարիքներու հետեւելով:

Դժբախտաբար, ո'չ թէ միայն ոմանք չեն գիտեր խոստովանութեան եւ ապաշխարութեան նշանակութիւնը եւ չեն զգար անոնց պետքը իրենց կեանքին մէջ, այլ նաեւ՝ կան այնպիսիներ, որոնք ձեւական եւ աւելորդ բաներ կը նկատեն զանոնք:

**ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԱՌԱՋԻՆ
ՆԱՍԱԿԸ**

**ԹԵՍԱԴՈՆԻԿԵՑԻՆԵՐՈՒՆ
4.1-11**

Այսպէս ուրեմն, եղբայրներ, մենք ձեզի սորվեցուցինք, թէ ինչպէս պէտք է ապրիլ Աստուծոյ հաճելի ըլլալու համար: Թէեւ այդպէս կ'ապրիք արդէն, սակայն կը խնդրենք եւ Տէր Յիսուս Քրիստոսի անունով կը թելադրենք, որ շարունակէք յառաջանալ ներկայ ձեր ընթացքին մէջ: Գիտէ՞ք, թէ ինչ պատուէրներ տուինք ձեզի Տէր Յիսուսի անունով, որովհետեւ Աստուծոյ կամքն է, որ դուք սրբուիք եւ ամենեւին հեռու մնաք պոռնկութենէ: Ձեզմէ իւրաքանչիւրը թող սրբութեամբ ու պատուով ամուսնանայ: Կրքոտ ցանկութիւններու անձնատուր մի՛ ըլլաք հեթանոսներուն պէս, որոնք զԱստուած չեն ճանչնար. կամ չըլլայ, որ մէկը եղբօրը դէմ մեղանչէ անոր կիներ յափշտակելով, որովհետեւ այդ բոլորին համար Տէրը իր դատաստանին մէջ անողոք պիտի ըլլայ, ինչպէս սկիզբէն ըսինք ձեզի եւ ազդարարեցինք: Միթէ Աստուած մեր պղծալից կեանքը շարունակելով՝ հրակիրեց մեզ, թէ սրբութեամբ ապրելու: Անշուշտ թէ սրբութեամբ ապրելու:

Հետեւաբար ով, որ սրբութեան այս պատուէրը կ'արհամարհէ՝ մարդ մը անարգած չ'ըլլար, այլ նոյնինքն զԱստուած, որ իր Սուրբ Հոգին կու տայ մեզի:

Գալով եղբայրասիրութեան, մեր գրելուն պէտք չունիք, որովհետեւ ինքնին դուք Աստուծոյ սորված էք զիրար սիրել, ինչպէս արդէն գործնապէս ցոյց կու տաք այդ սէրը ամբողջ Մակեդոնիայի բոլոր եղբայրներուն նկատմամբ: Բայց դարձեալ եղբայրներ կը խնդրենք, որ աւելի առատանաք ձեր սիրոյն մէջ, ջանաք հանդարտ կեանք մը վարել, միայն ձեր գործին նայիլ եւ ձեր աշխատանքի վաստակով ապրիլ, ինչպէս որ պատուիրեցինք ձեզի, որպէսզի ձեր պարկեշտ ընթացքով յարգուիք չհաւատացողներէն եւ ոեւէ մէկուն կարօտ չմնաք:

**ԵԹԷ ՅՈՒՍԱՀԱՏ ԷՔ, ԱՂՕԹՔԸ
ՉԵՁ ԿԸ ՉՕՐԱՅՆԷ**

- 1.- Իրիկունը լաց կայ, բայց առտուն՝ ուրախութիւն: (Սղ.30.5)
- 2.- Տէրը մօտ է անոնց, որոնց սիրտը կտրած է ու հոգիով խոնարհաները կ'ապրեցնէ: (Սղ.34.18)
- 3.- Սպասելով սպասեցի Տիրոջը, որ ծոնցաւ ինձի ու լսեց իմ աղաղակս եւ զիս կորստեան փոսէն, տղմալից կաւէն հանեց ու ոտքերս վէմի վրայ ամրացուց ու քալուածքս հաստատեց: (Սղ.40.2-3)
- 4.- Ինչո՞ւ կը ցածնաս, ով իմ հոգիս եւ ինչո՞ւ իմ ներսիդիս ես: Աստուծոյ յուսայ, վասնզի անգամ մըն ալ զանկա պիտի գովեմ: Ան է իմ երեսիս փրկութիւնը ու իմ Աստուածս: (Սղ. 42.11)

ՍՈՒՐԲԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ

**Ս. ԹԱՂԷՈՍ ԵՒ
Ս. ԲԱՐԹՈՂԻՄԵՆՈՍ ԱՌԱՔԵԱԼՆԵՐՈՒ
ՏՕՆ**

Ամէն տարի, Դեկտեմբեր ամսուան ընթացքին կը յիշատակուի Յիսուսի առաջին աշակերտներէն՝ Ս. Թաղէոս եւ Ս. Բարթողիմէոս առաքելներուն տօնը: Անոնք Հայաստանի մէջ քրիստոնէութեան քարոզչութիւնը սկսած են կատարել առաջին դարէն սկսեալ, Յիսուսի համբարձումէն ետք:

Հայաստանը այդ օրերուն կը նկատուէր կարեւոր եւ բազմամարդ երկիր: Ս. Թաղէոսի եւ Ս. Բարթողիմէոսի կը վիճակուի Հայաստանէն ներս քրիստոնէութիւնը տարածելու դժուար գործը, տրուած ըլլալով, որ այդ տարիներուն հայ ժողովուրդը բազմաստուածեան կրօն ունէր:

Ո՞Վ ԷՐ Ս. ԹԱՂԷՈՍ

Յիսուսի 12 աշակերտներէն մէկն էր: Յայտնի չէ, թէ երբ ծնած է, բայց նահատակուած է իր քարոզչական առաքելութեան ցամաքում վրայ՝ շուրջ 46 թուականին:

Թաղէոս առաքեալ կը յաջողի քրիստոնէութեան կրօնը տարածել հայոց արժուական պալատէն ներս՝ քրիստոնէայ մկրտելով Սանդուխտ կոյսը, որ Սանատրուկ թագաւորին աղջիկն էր: Թագաւորը կը փորձէ իր աղջիկը վերադարձնել քրիստոնէութենէն եւ անհաջողակ կը լինի իր փորձերով սպաննելու տայ թէ՛ Սանդուխտ կոյսը, թէ՛ Թաղէոս առաքեալը: Մինչ այդ Արտագ գաւառի բնակչութիւնը, հետեւած ըլլալով Ս. Թաղէոսի քարոզչութեան, անոր յիշատակին կը հիմնէ Թաղէի վանքը շուրջ 66 թուին, որ դարեւոր ընթացքին կը դառնայ հայ ժողովուրդի հոգեւոր կեդրոններէն մէկը:

Ո՞Վ ԷՐ Ս. ԲԱՐԹՈՂԻՄԵՆՈՍ

Բարթողիմէոս Յիսուսի 12 աշակերտներէն մէկն էր: Անոր կը տրուի նաեւ Նաթանայէլ անունը, որ կը նշանակէ «Աստուծոյ Նուէր»:

Ան քրիստոնէութիւնը քարոզած է Հնդկաստանի, Պարսկաստանի, Արաբիոյ եւ Հայաստանի մէջ: 66 թուին տեղի ունեցած է իր նահատակութիւնը:

Բարթողիմէոս կը նկատուի, Ս. Թաղէոս առաքելին հետ՝ Հայաստանի մէջ քրիստոնէութեան առաջին քարոզիչը:

Առաքեալը Հայաստանի մէջ իր քարոզչական աշխատանքը սկսած է Գողթան գաւառէն, ապա՝ Սիւնեաց, Արարատեան եւ Վասպուրական նահանգներուն մէջ: Ան կը յաջողի նաեւ հայոց արժուանի շրջանակներէն ներս ալ քարոզչութիւն կատարել: Քրիստոնէայ կը մկրտէ Սանատրուկ թագաւորին քոյրը՝ Ոգուհին եւ հագարապետ Տերեմտիոսը: Հետեւանք ա՛յն կ'ըլլայ, որ թագաւորը սպաննել կու տայ թէ՛ քոյրը, թէ՛ հագարապետը, թէ՛ առաքեալը:

Հայ ժողովուրդը, ի յիշտակ Ս. Բարթողիմէոսին, չորրորդ դարուն Վասպուրականի Աղբակ գաւառին մէջ կը շինէ վանք մը, որուն չորս աւանդատուներէն մէկուն մէջ գոյութիւն ունի տապանաճառ մը, վրան արձանագրուած՝ թէ հոն թաղուած է Ս. Բարթողիմէոս Առաքեալը:

Վանքը ներկայիս կիսաւեր վիճակի մէջ է:

Շնորհիւ Ս. Թաղէոս եւ Ս. Բարթողիմէոս առաքելներուն, Հայաստանեայց Մայր Եկեղեցին **ԱՌԱՔԵԱԼՆԵՐՈՒ** կը կոչուի՝ Յիսուսի առաքելներու նախնականութեամբ հիմնուած ըլլալուն համար: (ՍՈՒՐԲԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ ԳԻՐՔԷՆ)